

Dr. Tessa Hofmann, *Les Arménies En Turquie Aujourd'hui. La Minorité Arménienne en République Turque: Évaluation critique de la situation*, Imprimé en Suède, Le Assemblée des Arméniens d'Europe, 2004, 50 էջ:

Ուսումնասիրության նպատակը Երուսաղեմի Միության անդամակցության շեմին յայտնում թուրքիոյ՝ հայ փոքրամասնության 1993-2003 շրջանի վիճակի ներկայացումն է և ունի այն յոյսը, թե թուրքիոյ պետական քաղաքականությունը պիտի փոխտ այս գծով իր որդեգրած դիրքորոշումը:

Գիրքին Յառաջաբանին մէջ կը խօսուի աշխատասիրության բովանդակության մասին ու յանգում է գրականութիւններուն ամփոփումը կը կատարուի:

Ըստ գիրքին, թուրքիոյ մէջ, պաշտօնական ու վարչական խտրականության գուգահեռ, բնական է անարդարության յղացքին առկայութիւնը: Հեղինակուհին այս ընթացքին մէջ կը տեսնէ նպատակը՝ թուրքիոյ հայ փոքրամասնութիւնը ձուլելու կամ անոր արտագաղթին համար պայմաններ ստեղծելու, ինչ որ անցեալին իրագործուած ծրագրերուն հետ ալ նմանութիւն մը ունի: Այս նպատակը կ'իրագործուի գաղտնի ու քարուն կերպով և այսու կը մնայ աննկատելի, երբ կը դիտուի դուրսէն: Այս հանգամանքին լաւագոյն փաստն է երկրին մէջ ապրող հին հայերուն վիճակը:

Ասոնք՝ նոր իսլամ-թուրքերը, հասարակութենէն վտարուելու վտանգը աչքի առաջ ունենալով՝ չեն բացայայտեր իրենց ինքնութիւնը: Գիրքին մէջ նշուած են նաեւ Համշէնի հայախօս, բայց իսլամացած 20 հազար հայերը (Տրապիզոնի ու Էրզրումի շուրջ): Հեղինակը չէ անդրադարձած սակայն, Աւանոսի (Կապադովկիա, Կեսարիա) և Ատափազարի իսլամացած հայութեան: Այս հաւաքականութիւնները մեծաւ մասամբ ամուսնութիւններ կը կնքեն իրենց միջեւ ու իրենց շուրջի հասարակութիւնը գիտէ անոնց ծագման մասին: Հեղինակը հանդիպած է նաեւ հայերու, որոնց անուն-ազգանունները քրքացած են. ասոնք կրօնափոխ ըլլալով ընդունած են իսլամը ու կ'ապրին իսլամի օրէնքներուն համաձայն:

Միս կողմէն, Արեւելեան Անատոլոյի մէջ, 1980էն ետք, յատկապէս կեդրոնէն հեռու վայրերու մէջ, բնակչութիւնը իսլամացնելու փորձեր կատարուած են: Այս առումով, ուսումնասիրության մէջ կը նշուի 1983ին Սիիրքի մէջ (Սդերդ), Հարենդ=Աճառ գիւղի օրինակը: 1988ին, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ հրապարակուած զեկուցագրի մը մէջ կը նշուի, թե թուրքիոյ մէջ կան միլիոն մը հայեր, որոնք բռնի կերպով իսլամացուած են:

Խօսելով քրքահայ հաստատութիւններու և կազմակերպութիւններու վիճակին մասին, գիրքը կը կատարէ ճիշդ հաստատումներ, ինչպէս օրինակ, թե քրքահայ կազմակերպութիւններու գործունէութիւնը սահմանափակուած է կրօնական, հասարակական ու կրթական մարզերով: Իրաւացի է հեղինակը, երբ կը գրէ, թե կրօնական գործերն իսկ կ'իրականան պետութեան հակա-

կշռին ու գիտութեան ներքեւ եւ Հայ եկեղեցոյ հոգեւորականներուն թիւը կը նուազի օրէ օր:

Հռֆման իր ուսումնասիրութեան հայկական հաստատութիւններու ու իրենց հարցերուն նուիրուած բաժնին մէջ, կը նշէ, թէ Թուրքիոյ մէջ կան 38 առաքելական, 12 կաթողիկէ ու 4 արեւարանական եկեղեցիներ, որոնք սակայն հոգեւորականներու պակաս ունին: 1969ին փակուեցան դպրեվանքերը: Թէեւ յետագային իսլամական ուսումնարանները բացուեցան, սակայն հայոց ու յունաց դպրեվանքերը տակաւին կը մնան փակ: Հռֆմանի համաձայն, Հայկական երեսփոխանական ժողովը, որ 1960ին լուծարուած էր, 1990ին վերստին հիմնադրուեցաւ/կեանքի կոչուեցաւ՝ Պատրիարքութեան Խորհրդակցական Մարմին անուան տակ: Վերջինս սակայն, 1997ին դարձեալ լուծարուեցաւ: Թրքական կառավարութեան կողմէ առնուած այս քայլին պատճառաբանութիւնը այն էր, որ կրօնական ու դաւանական այլ խմբաւորումներ եւս կրնան նման մարմիններ պահանջել: Միւս կողմէ, 1998ին, Գարեգին Բ. Պատրիարքի վախճանումէն ետք, պատրիարքական նոր ընտրութիւններու սեմին, *Թիւրքիյէ* թերթը Մեսրոպ Արք. Մութաֆեանի (Թուրքիոյ հայոց այժմու պատրիարքը) դէմ սկսած էր շարժում մը: Այս շրջանին եւս 1997ին ու 2002ին, եկեղեցիներու դէմ յարձակումները նոյնպէս շարունակուած են, զրուած է Հռֆմանի կատարած այս ուսումնասիրութեան մէջ:

Պոլսոյ 18 հայկական վարժարաններուն մէջ, 1999ի տուեալներով, ուսում կը ստանան 3800 աշակերտներ, որոնց թիւը տարուէ տարի կը նուազի: Հայկական վարժարաններուն մէջ պարտադիր թուրք պէտք է ըլլայ փոխ-տնօրէնը, որուն իրաւասութեան դաշտը բաւականին լայն է: Օրէնսդրութեան համաձայն, դատարկ դպրոցները, նոյն նպատակով այլ հաստատութիւններու կողմէ կրնան փոխարինուի/ստանձնուիլ, ինչ որ նոյնպէս հակասութեան մէջ կը գտնուի Լոզանի Պայմանագրին հետ: Բաց աստի, պետութիւնը հայկական վարժարաններ գործուղուած թուրք ուսուցիչներուն անսակականները չի վճարեր: Հայ վարժարաններուն վարչութիւնները իրաւունք չունին ազատօրէն արձանագրելու ոչ-հայ աշակերտները: Հարկ է նշել, որ քրիստոնեայ այլ յարանուանութիւններու պատկանող ծնողներ իրենց զաւակները հայկական վարժարաններ չեն կրնար արձանագրել, եւ իր ուսումնատրութիւնը թրքական վարժարանի մը մէջ սկսած մանուկը, յետագային չի կրնար փոխադրուիլ հայկական վարժարան մը: Խառն ամուսնութենէ կազմուած ընտանիքի մը մէջ, եթէ հայրը ողջ է՝ մանուկը հայկական վարժարան կրնայ յաճախել, սակայն եթէ մեռած է՝ չի կրնար: Թրքահայ վարժարաններուն մէջ հայերէնի համար յատկացուած է յորս դասապահ, ինչ որ բաւարար կարելի է նկատել:

Մարդկային իրաւանց ծիրին մէջ, պէտք է մատնանշել, որ Թուրքիոյ մէջ անձնական ազատութիւններու սահմանափակումը հայերուն յատուկ չէ միայն: Ան կը վերաբերի Թուրքիոյ բոլոր քրիստոնեաներուն, որոնց պաշտօնավարումը պետական համակարգէն, դատական ու գինուորական (սպայ եւ ատելի բարձր կոչումներ) կալուածներէն ներս, կարելի չէ: Թուրքիոյ հայ համայնքին անդամները չեն կրնար իրենց ուսումը շարունակել ռազմական վար-

ժարաններուն մէջ, ինչ որ կը հակասէ Լոզանի Պայմանագրին: Անոնք սակայն կը կատարեն իրենց զինուորական ընթացիկ պարտականութիւնը, երկրի միւս քաղաքացիներուն հետ հաւասար իրաւունքներով: Հռֆմանի աշխատասիրութեան մէջ նշուած է, թէ հայ զինուորներն ու պահեստի սպաները խտրականութեան ու արհամարհանքի կ'ենթարկուին իրենց ծառայութեան ժամանակ: Հեղինակին այս հաստատումը այնքան ալ չի պատշաճիր իրականութեան: Միայն թէ, այն զինուորները, որոնք կու գան գաւառէն, իրենց ծառայութեան սկզբնական շրջանին կ'ունենան որոշ նախապաշարումներ, հետզհետէ սակայն, երբ կը հաստատուին ընկերական յարաբերութիւններ, այս նախապաշարումները կը ջնջուին: Չինուորական հրամանատարութեան կողմէ ուղղակի կատարուած խտրականութեան չեն հանդիպած վերջին շրջանին բանակի մէջ ծառայած հայ երիտասարդները:

Հանրային կարծիքի յառաջացումը այլ խոցելի կէտ մըն է: Արդարեւ, Թուրքիոյ իրականութեան այսպանելի երեսակներէն է այն, որ մամուլն ու պետական մեքենայի վարիչները իրենց կողմնակալ հաղորդումներով ու յայտարարութիւններով հասարակ ժողովուրդը կը գրգռեն հայ փոքրամասնութեան դէմ, որ բնակչութեան 0.1%ն իսկ չի կազմեր: Ժամանակ առ ժամանակ, յատկապէս Երոսպական Միութեան անդամակցութեան գործընթացին բերումով, անկողմնակալութեան տարագով պարտուած լուրերու կամ յօդուածներու հրապարակումը պարզապէս ցուցադրութիւն է եւ հեռու՝ անկեղծութենէ: Որպէս բնական հետեւութիւնը այս իրողութեան, բուրք մանուկներու 73%ը կ'ատէ հայը: Թուրքիոյ դասագիրքերուն մէջ կը պատմուի, թէ հայը թշնամի ժողովուրդ մըն է, Հայաստանն ալ՝ թշնամի պետութիւն մը: Այս քաղաքականութեան արդիւնքին, հարցախոյզներու մէջ հասարակութեան մէկ մասը համոզուած է, որ հայերը լաւ չեն կամ ալ վատ ժողովուրդ մըն են: 76%ին համար ալ Թուրքիոյ ամենէն քիչ ժողովրդականութիւն վայելող ազգը հայն է:

Աշխատութեան մէջ կը նշուի, թէ Թուրքիոյ քրիստոնեայ բնակչութիւնը կ'ենթարկուի յարձակումներու, եւ յարձակողները պաշտպանութեան տակ առնուելով նուազագոյն պատիժներով ազատ կ'արձակուին:

Արաքիւրքի Սելանիկի բնակարանին ոմբակոծման սուտ լուրի տարածման հետեւանքով տեղի ունեցած էին 1955 Սեպտեմբեր 6-7ի դէպքերը: Իսկ 1970ականներուն, ԱՄԱՆի ահաբեկչական արարքներուն հետեւանքով, 1977-1979ին կրթական ու կրօնական բազմաթիւ հաստատութիւններու մօտ ումբեր պայթեցան: 12 Սեպտեմբեր 1980ի զինուորական յեղաշրջման վաղորդայնին, օդակայանի մէջ ձերբակալուեցաւ կուսակրօն հոգեւորական մը (Հոգշ. Տ. Մանուէլ Վրդ. Երկաթեան, որ հիւանդութեան պատճառով վախճանեցաւ 2004ին, Հոլանտայի մէջ): Ան ենթարկուեցաւ զանազան կտտանքներու եւ ազատ արձակուեցաւ 1986ին, վատառողջ ըլլալուն հետեւանքով: 1982ին ալ ձերբակալուեցաւ հայ աւետարանական մը:

1992-1994՝ Ղարաբաղի խնդրին պատճառով, հայկական վարժարաններու պատերուն վրայ ծայրայեղ աջակողմեաններու կողմէ գրգռիչ գրութիւններ գրուեցան: Ելիշ այս շրջանին էր, որ Հանրապետութեան Նախագահ Թուր-

կուր Էօզալ յայտարարեց, թէ հայերը բնաւ դաս չեն քաղած պատմութենէն, իսկ 1992ին առետրական ու արդիւնաբերական հաստատութիւնները հեռապատճեններ ուղարկեցին բազմաթիւ գործատեղիներու՝ յորդորելով, որ այսուհետեւ վերջ դրուի հայերու հետ գործարարական կապերուն: Հրապարակուեցաւ նաեւ հայերու ու հրեաներու խանութներուն ցուցակը՝ անուն առ անուն, հասցէ առ հասցէ:

Պաքրրգիւղի ու Եշիզիւղի հայոց տուններուն նամակներ դրկուեցան՝ ազգայնական միութիւններու ստորագրութիւններով: Թէեւ Ազգայնական Շարժում Կուսակցութեան (ՄՀՓ, *Milliyetçi Hareket Partisi*) նախագահ Ապտուլլահ Թիւրքէշ յայտարարեց թէ կատարուածը իրմէ անկախ է ու հերքեց փաստը: Չանագան եկեղեցիներու մօտ ցոյցեր կատարուեցան: Գումգաբուի ու Գատրգիւղի մէջ, 1993ին, հայկական գերեզմանատուներու վրայ յարձակումներ գործուեցան եւ հայկական դպրոցները քարկոծուեցան:

Մտածելու ազատութիւնը զանգուածային լրատուամիջոցներուն մէջ կը բացակայի: Սա ամբողջ երկրին հիմնական հարցերէն մէկն է արդէն: 1999ին Ըդտրքի մէջ հայերուն կողմէ թուրքերու ցեղասպանութեան յիշատակին արձան մը բացուեցաւ: Այս առթիւ հրատարակուեցան ու կը շարունակուին երբեմն հրատարակուիլ յօդուածներ ու հաղորդումներ, որոնք կը պնդեն, թէ ցեղասպանութիւն մը կատարուած է, բայց՝ հայերու կողմէ՝ թուրքերուն դէմ: Ամէն անգամ, երբ Անատոլուի մէջ հարաբերական գերեզման մը բացուի, մամուլին մէջ կ'ըսուի, թէ ասոնք աճիւններն են այն թուրքերուն, որոնք ջարդուեցան հայերուն կողմէ: Միւս կողմէ դրական յառաջընթաց մը կարելի է նկատել այն, որ 2004ին հրատարակուեցան Անդրանիկ Չօրավարի մասին գիրք մը, ինչպէս նաեւ Վահագն Տատրեանի յօդուածներու ժողովածուն, որոնք դեռեւս առանց որեւէ պաշտօնական արգելքի, կը վաճառուին: Արտայայտուելու ու մտածելու ազատութեան կաշկանդումին առթիւ, Հոֆման տուած է օրինակները Մարդկային Իրաւանց Միութեան Նախագահ Ազրն Պիրտալի կալանաւորման, հրատարակիչ Ռակրփի Չարագօլուի դատապարտուած գիրքերուն եւ գրող Ելտայի Գերմանիա փախուստին:

Թուրք մամուլին մէջ հակահայ հրապարակումները կը շարունակուին՝ 1970ականներու ԱՄԱԼԱի ու 1990ականներու Ղարաբաղեան խնդրին հետ կապուած լուրերու մէջ մանաւանդ: Հասկնալի է՝ պարզ ժողովուրդը կ'առնէ այն, ինչ որ մամուլը կը հրամցնէ իրեն:

Ատենին մամուլին մէջ բուեցաւ, թէ ՓԶԶ կայք հաստատած է Հայաստանի մէջ (1993 թ.), թէ Սուրիայէն ու Իրաքէն Թուրքիա մուտք գործած 800 ՓԶԶականները հայեր էին (1996 թ.): 1993ին *Աքսիւլէն* թուրք լրագրող մը այցելեց Հայաստան՝ տեղւոյն վրայ ստուգելու համար այս հաղորդումներուն իրականութիւնը: Ան իր վերադարձին գրեց, թէ Հայաստանի մէջ, բացի եզիւտի խաղաղ գիւղերէն, չէ հանդիպած քրտական ահաբեկչական ոչ մէկ կայանի: Նմանատիպ հաղորդումով մը, հեղինակաւոր *Հիւրրիլէր* թերթը եւս հերքեց Հայաստանի մէջ ՓԶԶի կայաններու գոյութեան յերիւրանքը: Բաց աստի,

Կիննայտըն բերքը գրեց, որ ՓԲԶ նիւթական հովանաւորութիւն կը ստանայ հայերէն: Ըստեցաւ նաեւ, որ Ապտուլահ էօճալանի մայրը հայ է:

Հոֆման անդրադարձած է նաեւ Տոդան Ազիանլի նման գրողներու, որոնք հայկական եղեռնի մասին գեղարուեստական գիրքեր գրած են (օր.՝ *Դատաստանի Օրուան Դատաւորները*), սակայն ցաւալի է, որ մոռցուած է հայկական ցեղասպանութեան լաւագոյն մասնագէտներէն Թանէր Ազաւնի անունը:

Պատմական յուշարձաններու նկատմամբ Թուրքիոյ մէջ առհասարակ կը տիրէ անտարբերութիւն մը: Այս մթնոլորտին մէջ, հայկական կառոյցներն ալ իրենց հասանելի վնասը կը ստանան նման վերաբերմունքէ մը. այսպէս՝ փոքր քաղաքներու եւ լքուած տարածքներու մօտ գտնուող հայկական յուշարձանները, խնամքի բացակայութենէն վնասուելով, կամաց-կամաց կը կքին, կ'ոչնչանան:

Ուսումնասիրութեան քաժիններէն մին յատկացուած է հայկական մշակոյթի անտեսման ու ոչնչացման դէպքերուն: Տարբեր ժամանակներու, եկեղեցիները կամ վերածուած են մզկիթի, կամ ալ գիտակցաբար ենթարկուած են վնասներու: 1998ին Կարսի Ս. Առաքելոց եկեղեցին վերածուեցաւ մզկիթի, իսկ կիլիկեան շրջանի արքունիստ պատմական Հռոմկլան մնաց Պիրիճիկ ջրամբարի ջուրերուն տակ: 1990ին Անի մայրաքաղաքին մէջ կատարուած «վերանորոգութեան» աշխատանքներու արդիւնքը այն եղաւ որ բազմաթիւ յուշարձաններ փճացան: Չարմանալին այն է, որ վերանորոգութիւնները կը կատարուէին հայկական ճարտարապետութենէն զաղափար չունեցող անձերու կողմէ (օրինակ՝ վերանորոգութիւնը կատարող ճարտարապետներէն մին յետագային դարձաւ անդամը ՄՀՓի): Հայկական յուշարձանները կը վերագրուին տոհմերու, քազաւորական հարստութիւններու (օրինակ Բագրատունիներու, Արծրունիներու եւն.) առանց նշելու անոնց ազգային պատկանելիութիւնը: ԻԲՆԷՍ-ԲՕԻ 1974ի արձանագրութիւններուն համաձայն (որ 1999ին ստորագրեց նաեւ Թուրքիա), 464/913 կառոյցներ կործանուած են 1915էն ետք (252 հատը կործանուած է, իսկ 197 հատը վերստին պէտք է կառուցուի): Միւս կողմէ, հայկական արձանագրութիւնները, խաչքարերը գործածուած են նոր շինութիւններու ընթացքին:

2003ի տուեալներով, Թուրքիոյ հայ բնակչութիւնը կը հաշուէ 72 հազար: Իսկ, ըստ 1995ի պաշտօնական տուեալներու՝ 57 հազար: Ինչպէս կ'երեւի, 1965ի պաշտօնական տուեալներով նշուած 58 հազարին դիմաց, ոչ մէկ յաւելում կրած է այս քիւր²: Չանազան աղբիւրներ կը հաստատեն, թէ Օսմանեան կայսրութեան տարածքին, 1915էն առաջ, կ'ապրէին 2.5-3 միլիոն հայեր: Եիշդ է, որ 1964էն ետք մանաւանդ, Ստամպուլէն դուրս - Անատոլոյի տարածքին - հայեր չեն մնացած գրեթէ, այնուամենայնիւ կարելի է հայերու հանդիպիլ Կեսարիոյ, Իսքենտերունի, Հաքայի (Վագրֆիլը գիւղի մէջ կ'ապրին 150 հայեր) նման շրջաններու մէջ՝ ի բաց առեալ Հէմշինի եւ Աւանոսի հայախօսները:

Պոլսահայ բնակավայրերուն անդրադառնալով, ի յայտ կու գայ, որ այժմու Ստամպուլի ամէնէն հայաշատ քաղաքն է Քուրթուլուշը: Հայաշատ

նախկին քաղերը՝ Եշիզիզ (Այ Ստեփանօ), Պարբրզիզ (Մարբիզիզ), Գում-գարու, Մամաթիա, Ալթրսնթնր-Ետիքուլ, Գատրզիզ (նախկին Քաղկեդոնը) նույնպես ունին հայ բնակչություն, թեև ոչ անցեալի խտութեամբ: Չեռքի գա-նազան արհեստներու (ոսկերչութիւն եւն.) տէր, ինչպէս նաեւ առետուրով գրադող հայ հաւաքանութիւնը տնտեսական առումով կը կազմէ միջին դասա-կարգ մը Թուրքիոյ մէջ: Անոնք, ինչպէս բսուեցաւ, չեն կրնար պաշտօններ գրաւել պետական հաստատութիւններու մէջ, իրենց կրօնական տարբերու-թեան պատճառով:

Գիրքը ուշադրութիւն կը դարձնէ նաեւ փոքրամասնութիւններու վրայ դրուած տուրքերուն, եւ անոնց խնդիրներուն: Այսպէս, Օսմանեան կայսրու-թեան շրջանին, ոչ-քրիստոնեաներէն կը գանձուէին *ճիզիէ* ու *հարա*, կոչուող տուրքերը: Անոնք՝ ոչ-քրիստոնեաները, ըստ իրենց կրօնքի ու դաւանանքի, կ'ենթարկուէին բաժանումի՝ *միլլէթ* անուան տակ: Ամէն *միլլէթ* ունէր իր օրէնս-դրութիւնը: ԺԹ. դարասկիզբի բարեփոխումները, մանաւանդ Սուլթան Ապ-տիլյումէճիտի գահակալութեան շրջանին, հետզհետէ զարգացան եւ 1876ին ըն-դունումով Սահմանադրութեամբ ալ տեղի ամրագրուեցան: Այսպէսով ստեղ-ծուեցաւ համեմատաբար ազատ միջավայր մը:

Թուրքիոյ հանրապետական շրջանի պատմութեան մէջ 1922-24ի Տրապի-զոնի, 1929ի Հարփուքի (Խարբերդ), Տիարպաքրքի, Մարտինի մէջ պատահած են գանազան դէպքեր: Թուրքիայէն այս շրջանին, կամ տեղի առաջ, հեռա-ցած բնակչութիւնը եթէ 24 Յուլիս 1923-23 Մայիս 1927ի միջեւ երկիր չէ վերա-դարձած՝ զրկուած է իր հայատակութենէն:

1942-1944ի Ռմեւորութեան Տուրքը եւս կը հակասէ Լոզանի Պայմանագ-րի տրամադրութիւններուն: Բացատրուած է, թէ այս քայլը ժամանակի վար-չապետ Շիքրի Մարաճօղլուի կողմէ առնուած է՝ քրքացնելու համար երկրի տնտեսութիւնը: Այս նիւթը վերջերս վերստին յայտնուեցաւ Թուրքիոյ օրա-կարգին, երբ քաղաքագէտ-գրող Երլմազ Քարաքոյունլուի *Տիկին Մայրոմի Հատիկները* վեպին հիման վրայ նկարահանուեցաւ համանուն ժապաւէնը: Այսպէսով, հասարակութիւնը տեղեակ դարձաւ Ռմեւորութեան Տուրքին ու ա-նոր պատճառով վնասներուն, ինչ որ դրական յառաջընթաց մը կարելի է նկատել: Այնուամենայնիւ, ՄՀՓ արտայայտեց իր ժխտական վերաբերմուն-քը այս առթիւ եւս:

Թուրքիոյ հայ համայնքի ամէնէն մեծ հարցերէն մէկն ալ *վագրճներու*՝ համայնքային կալուածներու խնդիրն է: Օգոստոս 1926ին ընդունուած որոշ-ման մը համաձայն, 6 Օգոստոս 1924էն առաջ անձերու սեփականութիւնը ե-ղող տարածքներն ու կալուածները ետ պիտի վերադարձուէին: Հռօմանի ուսումնասիրութեան մէջ չէ նշուած սակայն, թէ այս որոշումը իրագործուա՞ծ է, թէ՛ ոչ. ըստ երեւոյթին՝ ոչ: 1926 ու 1936 բուականներէն վերջ գոյութիւն ունի կալուած գնելու մասին օրէնք մը, որուն հետեւանքով 1974ին ի պետութիւն գրաւուած են բոլոր այն 39 կալուածները, որոնք գնուած կամ գանազան առիթներով ստացուած են նշեալ բուականներուն միջեւ: 2001ին դատարանը օրինականացուցած է այս գրաւումը, նշելով, որ այդ շրջանին կալուածներ

չէին կրնար առնուիլ կամ կտակուիլ: 2002ին, Երոպական Միութեան հետ համաձայնեցման օրէնքներու շրջագծով, երկրի խորհրդարանին կողմէ ջնջուեցաւ 1936էն վերջ կտակի միջոցով կալուածներ ընդունիլն արգիլող օրէնքը, սակայն նոր որոշումն ալ գործադրութեան տեսակէտէ այնքան մանրութենէ կը պահանջէ, որ այս հարցը տակաւին կը շարունակէ իր անելանելի բնոյթը ու նոր օրէնքը կը մնայ անգործադրելի:

Հռֆման իր աշխատութեան մէջ կ'անդրադառնայ պատմական իրողութիւններու, ինչպէս եւ անոնց յետագայ զարգացումներուն՝ 1878ի Պերլինի Վեհաժողովին, *Իրքիսատ Վէ Թերաքքի* կուսակցութեան գործունէութեան, Մեծ Եղեռնին, Սեւրի Դաշնագրին: Հեղինակը կը շեշտէ, որ 1915ի եղեռնը, ըստ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան, 1991ին ընդունուած է որպէս ցեղասպանութիւն: Ան կ'ըսէ, թէ Լոզանի Պայմանագիրը, աշխարհավար կարգերուն հակադրուելով, Թուրքիոյ հայ ազգաբնակչութեան մասին խօսք չ'ըներ, այլ միայն կ'ընդունի երկրէն ներս գոյութիւն ունեցող ոչ-խլամ բնակչութիւն մը:

Հուսկ, ազգայնականութիւնը կը մագցի Թուրքիոյ մէջ, ուր Պատմութեան Հիմնարկին կողմէ կը շարունակուի պաշտօնական պատմութեան գրառումը, հետեւաբար՝ պատմութեան գեղծարարութիւնը: 2002ին Թուրքիոյ Խորհրդարանի կողմէ ընդունուած որոշման մը համաձայն, թոյլատրուեցաւ տարբեր լեզուներով (քրտերէն, հայերէն, ասորերէն եւն.) հաղորդումներ կատարել հետաետեսիլով ու ձայնասփիտով: *Վազրէները* պիտի կարենան այսուհետեւ գնել նոր կալուածներ: Բացասական էր այն, որ դպրոցական աշակերտներուն հրահանգուեցաւ շարադրութիւններ գրել՝ հայկական եղեռնը ժխտող բնոյթով, ինչ որ անմիջապէս դատապարտուեցաւ հանրային կարծիքին կողմէ:

Հռֆման իր ուսումնասիրութեան նիւթերը քննած է հետեւողականօրէն, տեղ-տեղ զանոնք հարստացուցած է բազմաթիւ օրինակներով: Գիրքին մէջ տեղ գտած են այնպիսի տուեալներ, որոնց մասին Թուրքիոյ մէջ չեն գիտեր մանրամասնօրէն (եւ կամ «ոմանք» չեն խրախուսեր որ գիտցուին): Աշխատութիւնը ունի ճիշդ դատումներ եւ վերլուծումներ:

Գիրքին ու հեղինակին անաշառութիւնը կրնայ սակայն կասկածի ենթարկուիլ ոմանց կողմէ, տրուած ըլլալով, որ գիրքը գրուած է Թուրքիոյ Երոպական Միութեան անդամակցութեան շէմին, Երոպայի Հայկական Խորհուրդին պատուէրով: Թուրքիոյ Երոպական Միութեան անդամակցութեան դէմ եղող հայկական կազմակերպութեան մը այս հրատարակութիւնը կրնայ արժանաւորաբար քաղաքական վերագրումներու, ինչ որ շուքի տակ կրնայ թողուլ գիրքին բովանդակութիւնը:

ԳԷՈՐԳ ԳՐԻԳՈՐԵԱՆ
ՍԵՒԱՆ ՏԷՅԻՐՄԷՆՃԵԱՆ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Աշխատասիրութեան մէջ նշուած են իբրեւ 30-40 հազար:

² Ի դէպ, 1997-2001ի միջեւ 82,250 Հայաստանի քաղաքացիներ մուտք գործած են Թուրքիա: